

Ու երբ արեւն ալ քրքմաներկ վրձինով  
Ոսկեգօծէ սրգատամուկ ձեր հոգին,  
Երբ համբոյրի պէս փաթթուի ձեր շոգին  
Անոր ցոլքին՝ եղկ, տարփագին ու գինով.

Միշտ, յամրագին կաթկըթեցէք դուք նորէն  
Արծաթելու համար խորհուրդն անպարփակ  
Որ շուքէ շուք կը թռչնտի լայնօրէն  
Ընդգրկելով ամէն դալար շրջափակ:

Ու երբ ցայգն ալ ծառաստանին մէջ սահի  
Սեւ մագիլով ձեր ջինջ հոգին ճանկելու,  
Լացէ՛ք նորէն, դուք համակերպ ու հըլու  
Դողըղագին ձեր տագնապին մէջ ահի:

### 35. ՅԱՅԳՆ Է ՊԱՅԾԱՌ...

Յայգն է պայծառ անհունօրէն  
Տուցըլանքովն իր խօլապար.  
Օղանոյշներ՝ որ մեղմաբար  
Քնքշանքով գիս կը պարուրեն:

Բուստ համբոյրով՝ որուն կարմիր  
Կարօտովն իմ հոգիս կու լար,  
Ինչպէս փանդիռ մը մեղմալար՝  
Պոնդերու տակ մեղկ ու ցանցիր:

Պարզկայ ցայգուն անուրջին մէջ  
Լըւալ կ'ուզեմ հիմակ հոգիս,  
Եւ հըրահրել՝ երբեմնի շէջ  
Աշտանակներն իմ երագիս:

Մըտածումըս կ'անցնի նորէն  
Շաւիղներէն իր լուսաւետ,  
Յեշտութիւններ հոգւոյս յաւետ  
Բերելով իր ճամբաներէն:

Գինո՛վ եմ ես ծաղկանց բոյրէն,  
Տարաշխարհիկ ու գըրաւիչ,